ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ

ՀՀ էկոնոմիկայի նախարար

Պարոն Գևորգ Պապոյանին

Դիմող կազմակերպություն՝ «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0001, Ամիրյան 1
Էլեկտրոնային փոստ՝ Info@amcham.am
Հեռախոս՝ +374 91 433 114

Հարգելի՛ պարոն Պապոյան,

Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության, ինչպես նաև «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքով սահմանված դրույթները՝ ներկայացնում ենք «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպության դիմում–հայտը՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար։

«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ-ը իրականացնում է նպատակային և շարունակական գործունեություն Նախարարության հիմնական ոլորտներում՝ ունենալով փաստացի փորձ և ոլորտային զարգացումների ուղղությամբ իրականացրած ծրագրեր։ Իրականացված ծրագրերն ունեցել են ոլորտային նշանակություն և նպաստել են պետական քաղաքականությունների մշակմանն ու համագործակցության խորացմանը։ Կազմակերպությունը ներգրավված է եղել Նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներում, ինչպես նաև համագործակցել է միջազգային կազմակերպությունների հետ ոլորտին առնչվող նախաձեռնությունների շրջանակում։

Հաշվի առնելով կազմակերպության ոլորտային փորձառությունն ու կատարած աշխատանքը՝ խնդրում ենք հաստատել «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպության ընդգրկումը ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում։

Դիմում–հայտին կից ներկայացվում են՝

1. Կազմակերպության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի միասնական գրանցամատյանից քաղվածքի պատճեն,
2. Կազմակերպության կանոնադրության պատճեն,
3. Կազմակերպության կոնտակտային տվյալները

Հեռախոսահամար՝ +374 91 433 114
Էլեկտրոնային փոստ՝ Info@amcham.am

4. Կազմակերպության ներկայացուցիչների տվյալները, որոնք ներկայացնելու են կազմակերպությունը և մասնակցելու խորհրդի աշխատանքներին՝
    - «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ խորհրդի նախագահ՝

      Էլինա Ռուբենի Մարկարյան

    - Անձնագրային տվյալներ՝ ՀՀ անձնագիր՝ BA3803465, տրված 04.10.2022թ, 001-ի կողմից, ՀԾՀ 5605800051, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդ 107, բն 15

    - Կոնտակտային տվյալներ

      Հեռախոսահամար +374 98 222 385

      Էլեկտրոնային փոստ Elina.Markaryan@cchellenic.com

      _____

    - «Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ գործադիր տնօրեն՝

      Աննա Տիգրանի Ներսեսյանց

    - Անձնագրային տվյալներ՝ Նույնականացման քարտ՝ 009201500, տրված 15.01.2018թ, 004-ի կողմից, ՀԾՀ , հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հովսեփ Էմինի 64

    - Կոնտակտային տվյալներ

      Հեռախոսահամար +374 91 433 114

      Էլեկտրոնային փոստ anna.nersesyants@amcham.am

5. Կազմակերպության գործունեության և իրականացրած ծրագրերի համառոտ նկարագիր,

Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում ՀԿ-ն բիզնեսների միություն է, որը 2000 թվականից ի վեր համախմբում է տնտեսության ավելի քան 20 ոլորտների շուրջ 180 բիզնեսներ և որը միտված է նպաստելու ՀՀ գործարար միջավայրի լավարկմանը և ամրապնդելու տնտեսական և առևտրային կապերը Հայաստանի և ԱՄՆ-ի միջև: ԱԱՊՀ գործունեության 3 հենասյուներն են. ա) անդամ կազմակերպությունների շահերի պաշտպանությունն ու ջատագովությունը, որն իրականացնում է իր 4 փորձագիտական հանձնաժողովների/կոմիտեների միջոցով. «Կայուն զարգացում», «Հարկային և իրավական բարեփոխումներ», «Թվային փոխակերպում» և «Կրթություն և աշխատուժի զարգացում»; բ) անդամ կազմակերպությունների համար ճանաչելիության ընդլայնումը, գ) բիզնես կապերի ստեղծման համար հարթակ ծառայելը: ԱԱՊՀ-ն նպատակ ունի խթանելու մասնավոր հատվածի և կառավարության միջև համագործակցությունը՝ ապահովելով աճ, ներգրավելով ներդրումներ և բարձրացնելով մրցակցությունը: Վերոհիշյալ կոմիտեներն աշխատում են իրենց օրակարգին վերաբերող օրենքների նախագծերի, կարգավորումների, հայեցակարգերի համար փորձագիտական կարծիքի, դիքորոշման տրամադրմամբ և ջատագովությամբ:

6. Ծրագրերի իրականացման ապացույցներ (որոշումների, մասնակցության, համագործակցության փաստաթղթային հիմքեր և այլն)։

Պալատը արդյունավետ համագործակցում է ՀՀ կառավարության հետ հետևյալ կարևոր հարցերի շուրջ.

- ԱՄՆ և ՀՀ միջև կրկնակի հարկում;
- Առևտրային կցորդի և ներդրումային գործակալի ինստիտուտի ձևավորում ԱՄՆ-ում;
- Առողջության համապարփակ ապահովագրություն, որի ուղղությամբ աշխատում է հայեցակարգի մշակման ամենասկզբից;
- Ականավոր հայերի շտեմարանի ստեղծումը ՀՀ վարչապետի, Ներդրումների աջակցման կենտրոնի և Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համաձայնեցված ջանքերով;
- Պալատը ներգրավված է նաև «Արտադրողի Ընդլայնված Պատասխանատվության» մասին օրենքի նախագծի մշակման գործընթացում, որի շրջանակում ձևավորվել է «Էկոպակ» ՀԿ-ն՝ որպես թափոնների կառավարման պիլոտային ծրագիր, որն իրականացվում է Հրազդանում՝ երկրի ողջ տարածքով կրկնապատկվելու ակնկալիքով;
- Պալատը ներգրավված է նաև «Ներդրումների մասին» օրենքի, «Հետագծելիության համակարգի մասին», «Կիբեռանվտանգության և կարգավորման մարմնի մասին» օրենքների նախագծերի, «Աշխատանքային օրենսգրքի» փոփոխություններում և մի շարք այլ ուղղություններում։

Հարգանքով,

«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» ՀԿ խորհրդի նախագահ՝

Էլինա Մարկարյան

21 նոյեմբեր 2025թ.